ՊԱՏՐԻԱՐՔՆ

ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱՆԴԵՍԻ Ի ՏԷՐ

Ի 26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1884 ԱՄԻ

Ահա այս մասին Ամենապատիւ Տեղակալ Հօր և Կ. Պոլսոյ Կրօնական Ժողովոյ Գեր. Ատենապետի միջև փոխանակեալ մահագոյժ և սգառիթ հեռագրերի պատճէնները։

«Ի Պերայէ յէջմիածին ի 27ն Հոկտեմ.

Առ Տեղակալ Կաթուղիկոսին Էջմիածնի.

Անհնարին տրտմութեամբ յայտնեմք, զի Նորին Սրբութիւն Ներսէս Պատրիարք, որ թուէր առողջանալ՝ յերեկն յանակնկալս հանգեաւ ի Տէր. վասն հանգստեան Հոգւոյ Նորին Սուրբ Պատարագ լինելոց է ի համայն եկեղեցիս Հայոց Տաճկաստանի ի 4/16 Նոյեմբերի։ Ցաւիտեան պահպանեսցէ Աստուած զեկեղեցին Հայաստանեայցս.

Ատենապետ Կենտր. Կրօն. Ժողովոյ Խորէն Արքեպիսկոպոս.»

—

«Ցէջմիածնէ ի Պերա Կոստանդնուպօլսոյ ի 28ն Հոկտ.

Առ Ատենապետ Կրօնական Ժողովոյ Խորէն Արքեպիսկոպոս.

Մեք և ամենայն Միաբանութիւնն անհնարին տրտմութեամբ ընկալաք զգոյժ մահուան Սրբազան Ներսէս Պատրիարքի. մաղթեմք Հոգւոյ Նորին հանգիստ և երկնից արքայութիւն։ Մխիթարեսցէ Տէր զվշտագնեալ սիրտ ազգայնոց մերոց և պահպանեսցէ յաւիտեան զեկեղեցին Հայաստանեայցս։ Միաբանութիւն Մայր Աթոռոյս պատարագել ունի վասն փրկութեան Հոգւոյ Նորին Սրբութեան ի 4/16ն Նոյեմ։

Տեղակալ Մկրտիչ Արքեպիսկոպոս.»

Լուսաւորեսցէ Ցէր զՀոգի Հանգուցելոյն, և ի տրիտուր վաստակոցն ընդ սուրբս և ընդ արդարս դասեսցէ յարքայութեան երկնից. Ամէն։